

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Օգտվելով քարտեզագրական հետազոտության մեթոդից՝ քարտուրսի սալերի տեղաշարժերի տեսությունը մշակեց.

- 1) Օ. Շմիդտը
- 2) Ա. Հումբոլդտը
- 3) Ա. Վեգեները
- 4) Վ. Դոկուչանը

2

Լիալուսինը կեսգիշերին երևում է.

- 1) արևմուտքում
- 2) արևելքում
- 3) հյուսիսում
- 4) հարավում

3

Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը:

- 1)  $315^\circ$
- 2)  $135^\circ$
- 3)  $225^\circ$
- 4)  $270^\circ$

4

Նկարում 1-ում ի՞նչ պրոյեկցիա է պատկերված:

- 1) կոնային
- 2) հասարակածային
- 3) ազիմուտային
- 4) գլանային



Նկար 1

5

Երկու կետերի իրական հեռավորությունը 48 կմ է: 1 : 800 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.

- 1) 600 սմ
- 2) 0,6 սմ
- 3) 6 սմ
- 4) 60 սմ

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հասարակածում ամբողջ տարվա ընթացքում գիշերվա ու ցերեկվա տևողություններն իրար հավասար են:
- 2) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը հունիսի 22-ին է:
- 3) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը դեկտեմբերի 22-ին է:
- 4) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին է:

7

Նկար 2-ում ո՞ր տառով է նշված երկրագնդի ներքին միջուկը:


- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



նկար 2

8

Նկար 3-ում ի՞նչ է պատկերված:



նկար 3

- 1) գետսինկլինալ
- 2) հորստ
- 3) գրաբեն
- 4) պլատֆորմ

9

12 ամիսների օդի միջին ջերմաստիճանների գումարը բաժանելով տարվա ամիսների քանակի վրա՝ կարելի է որոշել օդի.

- 1) միջին ամսական ջերմաստիճանը
- 2) առավելագույն ջերմաստիճանը
- 3) միջին տարեկան ջերմաստիճանը
- 4) ջերմաստիճանի լայնույթը

10

Ընտրել կլիմայի բնորոշ գծերի և կլիմայի տիպերի համապատասխանությունների ճիշտ շարքը.

- |   |                      |
|---|----------------------|
| 1. ջերմաստիճանի մեծ տատանումներ և տարվա ընթացքում անհավասարաչափ բաշխված քիչ տեղումներ | ա. ծովային կլիմա     |
| 2. ջերմաստիճանի փոքր տատանումներ և ամբողջ տարին թափվող առատ տեղումներ                 | բ. մուսսոնային կլիմա |
| 3. մեղմ ու խոնավ ձմեռներ և տաք ու չոր ամառներ   | գ. ցամաքային կլիմա   |
| 4. ցուրտ ու չոր ձմեռներ և տաք ու խոնավ ամառներ  | դ. միջերկրածովային   |

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

11

Օվկիանոսի առափնյա գոտում մինչև 200մ խորությամբ տեղամասը կոչվում է.

- 1) ցածրավայր
- 2) մայրցամաքային ծանծաղուտ
- 3) փողրակ
- 4) մայրցամաքային լանջ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարվա ընթացքում գետի ջրի մակարդակի տատանումները կոչվում է գետի տարեկան հոսք:
- 2) Ամեն տարի՝ նույն սեզոնին, գետի ջրի քանակի ավելացման երևույթը կոչվում է ծախս:
- 3) Գետի թեքությունը գետի անկման հարաբերությունն է նրա երկարությանը:
- 4) Լեռնային շրջաններում գետերի ջրբաժանն անցնում է լեռնաշղթաների ստորոտի ամենացածր մասով:

13

Տարվա ընթացքում ո՞ր լճերի մակերեսն է զգալիորեն փոխվում.

- 1) Էյր և Չադ
- 2) Բայկալ և Բալխաշ
- 3) Վերին և Նյասա
- 4) Էրի և Օնեգա

14

Բնական համալիրներից ո՞րն է աչքի ընկնում հողի առավել բարձր բերրիությամբ.

- 1) տափաստանը
- 2) տայգան
- 3) տունդրան
- 4) անապատը

15

«Բնական զոնա-բնորոշ բուսատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) սավաննա-շագանակենի, բոխի
- 2) մերձարևադարձային կոշտատերև անտառ-խցանակաղնի, քարակաղնի
- 3) խոնավ մերձարևադարձային անտառ-բառբաբ, շշածառ
- 4) փշատերև անտառ- հաճարենի, դափնի

16

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գոնդվանա հնագույն մայրցամաքը մասնատվել է հին՝ պալեոգոյան դարաշրջանի վերջերին:
- 2) Եվրասիա մայրցամաքն ամբողջությամբ Լավրասիա հնագույն մայրցամաքի մասն է:
- 3) Նոր դարաշրջանի վերջում կլիման զգալիորեն ցրտել է, և երկրագնդի հյուսիսային շրջանները սառցապատվել են:
- 4) Միջին դարաշրջանում երկրագնդի կլիման շոգ ու խոնավ էր, որի շնորհիվ աճում էին փարթամ անտառներ:

17

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթում տեղի է ունենում նյութերի և էներգիայի շրջապտույտ:
- 2) Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները չեն կրկնվում:
- 3) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ ունեն գոտիական և զոնայական տարածում:
- 4) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ միասնական են և փոխալայմանավորված:

18

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Պետական սահմանի անցկացումը կատարվում է 2 փուլով՝ սահմանարկման և սահմանագծման:
- 2) Պետության տարածքի ձևը չի ազդում տրանսպորտային ցանցի զծագրության, տարաբնակեցման բնույթի վրա:
- 3) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն չէ:
- 4) Գաղութային անցյալը չի ազդել Աֆրիկայի երկրների սահմանների զծագրության ձևավորման վրա:

19

**«Սահմանակից երկրներ-լեռներ» զուգորդումներից ընտրել սխալը.**

- 1) Արգենտինա-Չիլի-Անդեր
- 2) Ռուսաստան-Վրաստան-Մեծ Կովկաս
- 3) Ֆրանսիա-Իսպանիա-Պիրենեյներ
- 4) Չինաստան-Հնդկաստան-Ալպեր

20

**Խաղաղօվկիանոսյան երկրներ են.**

- 1) Հունաստանը և Բուլղարիան
- 2) Նորվեգիան և Լյուքսեմբուրգը
- 3) Վրաստանը և Թուրքմենստանը
- 4) Ճապոնիան և Ֆիլիպինները

21

**Էքսկլավ է.**

- 1) Ման Մարիոն
- 2) Լեսոտոն
- 3) Ալյասկան
- 4) Սվազիլենդը

22

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
- 2) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
- 3) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
- 4) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:

23 **Նոսր բնակեցված երկրներ են.**

- 1) Հայաստանը և Վրաստանը
- 2) Ավստրալիան և Կանադան
- 3) Գերմանիան և Ֆրանսիան
- 4) Ինդոնեզիան և Ճապոնիան

24 **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, և ազգը դառնում է ավելի միասնական և ամրակուռ, կոչվում է.**

- 1) ասիմիլյացիա
- 2) ազլոմերացիա
- 3) կոնսոլիդացիա
- 4) ուրբանիզացիա

25 **Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն.**

- 1) մեկերը
- 2) ջեկերը
- 3) ջրէկերը
- 4) աէկերը

26 **Մեքենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ.**

- 1) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ
- 2) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ
- 3) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ
- 4) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում

27 **Որոշել եզիպտացորենի ցանքատարածությունների մակերեսը, եթե եզիպտացորենի համախառն բերքը 12000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 30ց/հա.**

- 1) 42 կմ<sup>2</sup>
- 2) 60 կմ<sup>2</sup>
- 3) 40 կմ<sup>2</sup>
- 4) 36 կմ<sup>2</sup>

28 **Բնութագրումով որոշել լիճը.**

*Ամուղարյա և Սիրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է:*

- 1) Արալյան
- 2) Բալխաշ
- 3) Կասպից
- 4) Բայկալ

29

**Ո՞ր պնդումն է ճիշտ**

- 1) Եվրասիայի արևելյան և հարավարևելյան շրջաններում շատ են գործող հրաբուխները:
- 2) Եվրասիայի ամենացածր կետը Մերձկասպյան ցածրավայրում է:
- 3) Եվրասիայի տարածքի մեծ մասը պատկանում է Եվրոպային, իսկ փոքր մասը՝ Ասիային:
- 4) Եվրասիայի ամենամեծ հարթավայրը Մեծ Չինականն է:

30

**Աֆրիկայի մերձհասարակածային գոտիներում ամառային սեզոնին տեղումների քանակը կազմում է.**

- 1) 1800-2000 մմ
- 2) 500-600 մմ
- 3) 1500-1600 մմ
- 4) 250-300 մմ

31

**Ո՞ր շարքում *սիսալ* կա:**

- 1) Բենգալյան, Կարմիր
- 2) Ասսալի, Քաթթարայի
- 3) Տանգանիկա, Նյասա
- 4) Դրակոնյան, Կապի

32

**Ո՞ր պնդումն է *սիսալ*.**

- 1) Բերինգի նեղուցով են միանում Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները
- 2) Բերինգի նեղուցով Հյուսիսային Ամերիկան բաժանվում է Եվրասիայից:
- 3) Բերինգի նեղուցով Չուկոտյան թերակղզին բաժանվում է Լաբրադոր թերակղզուց:
- 4) Բերինգի նեղուցով են միանում Չուկոտյան և Բերինգի ծովերը:

33

**Ո՞ր պնդումն է *սիսալ*.**

- 1) Նյուֆաունդլենդ կղզին բարեխառն գոտում է:
- 2) Ալյասկա թերակղզին բարեխառն գոտում է:
- 3) Յուկատան թերակղզին մերձհասարակածային գոտում է:
- 4) Ֆլորիդա թերակղզին արևադարձային գոտում է:




34

Ավստրալիայում ի՞նչ լեռներ կան:

- 1) Ավստրալական Հիմալայներ
- 2) Ավստրալական Անդեր
- 3) Ավստրալական Կարպատներ
- 4) Ավստրալական Ալպեր

քարտեզ 1



35

Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Լա Պլատայի դաշտավայրը:

- 1) Բ
- 2) Զ
- 3) Է
- 4) Ա

36

Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Օրինկո գետը:

- 1) Ը
- 2) Դ
- 3) Ե
- 4) Գ

37

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ոսկու պաշարների հիմնական մասը տեղաբաշխված է երկրի եվրոպական մասում:
- 2) Նավթի պաշարներով ու արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղը:
- 3) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջրային էլեկտրակայաններում:
- 4) Ածխի արդյունահանման խոշոր ավազաններից է Կուզբասը:

38

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային ծովի ծանծաղուտից արդյունահանում է նավթ ու բնական գազ:
- 2) Աշխարհի առավել անտառապատ երկրներից է:
- 3) Կլիման բարեխառն ցամաքային է:
- 4) Մայրցամաքից բաժանված է Ջիբրալթարի նեղուցով:

39

Իտալիային պատկանող կղզի է.

- 1) Մալթան
- 2) Կրետեն
- 3) Սիցիլիան
- 4) Կորսիկան

40

Տրված գույգ քաղաքներից Ֆրանսիայում են.

- 1) Դյուսելդորֆը և Լիլը
- 2) Լյուքսեմբուրգը և Մյունխենը
- 3) Լիոնը և Մարսելը
- 4) Թուրինը և Բիրմինգհեմը

41

Դեպի Միջերկրական ծով ելք չունեցող պետությունն է.

- 1) Սիրիան
- 2) Իսրայելը
- 3) Իրաքը
- 4) Լիբանանը

42


Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:
- 2) Հինդուստան թերակղզու կենտրոնական մասում է տարածվում Դեկանի սարահարթը:
- 3) Ընդերքը հարուստ է երկաթի և քարածխի պաշարներով:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնաբուծությունն է:

43

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տրանսպորտի զարգացման մակարդակով աշխարհում գրավում է վերջին տեղը:
- 2) Գյուղատնտեսությունը բազմատնտեսաձև է:
- 3) Համեմատաբար լավ է զարգացած հանքարդյունաբերությունը:
- 4) Հյուսիսում արդյունաբերական խոշորագույն շրջանը պղնձի գոտին է:



քարտեզ 2

44

Քարտեզ 2-ում Արարատի մարզը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Է
- 3) Գ
- 4) Դ

45

Քարտեզ 2-ում Աժդահակ լեռնագագաթը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Ա
- 4) Բ

46

Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.

- 1) Դերջանի, Երզնկայի, Կամախի
- 2) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի
- 3) Երզնկայի, Կարնո, Նախիջևանի
- 4) Մշո, Բալահովտի, Խարբերդի

47

ՀՀ –ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Լեռնային շրջաններում գյուղերը երբեմն դասավորված են գետահովիտների հատակային մասերով անցնող երկաթուղիների կամ ավտոխճուղիների երկայնքով:
- 2) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության արտահոսքի արդյունքում բազմաթիվ գյուղեր վերացել են:
- 3) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը վերջին տարիներին նվազել է:
- 4) Մարահարթերի ցածրադիր մասերում և միջլեռնային գոգավորություններում գյուղերն ունեն հոծ դասավորություն և առաջացնում են համատարած գյուղական տարաբնակեցում:

48

Ոչ գյուղատնտեսական հումքի վրա հիմնված ՀՀ սննդի արդյունաբերության ճյուղ է.

- 1) պանրագործությունը
- 2) պահածոների արտադրությունը
- 3) զինեգործությունը
- 4) հանքային ջրերի արտադրությունը

49

ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Փամբակ և Ձորագետ գետերի ավազաններում.

- 1) Տավուշ
- 2) Շիրակի
- 3) Կոտայքի
- 4) Լոռու

50

ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) անտառային գոտուն բնորոշ կենդանատեսակներ են.

- 1) բեզուարյան այծը և գայլը
- 2) կրիան և ոզնին
- 3) գորշ արջն ու լուսանը
- 4) օձն ու մողեսը

51

Տրվածներից ո՞րն է նպաստում մթնոլորտի մաքրության պահպանմանը.

- 1) ասֆալտապատ տարածքների ընդարձակումը
- 2) անտառների հատումը
- 3) ցեմենտի արտադրության ավելացումը
- 4) կանաչապատ տարածքների ավելացումը

52

«Բնական ռեսուրս – վերականգնման հատկություն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) նավթային ռեսուրս – սպառվող - վերականգնվող
- 2) կենսաբանական ռեսուրս - անսպառ
- 3) կլիմայական ռեսուրս – սպառվող-վերականգնվող
- 4) երկրաջերմային ռեսուրս – անսպառ

53

Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.

- 1) քիմիական պարարտանյութերը
- 2) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
- 3) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
- 4) գեյզերների ջրերում լուծված նյութերը

54

Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է.

- 1) տնկարկների ոռոգումը
- 2) խոտհարքների օգտագործումը
- 3) վարելահողերի մշակումը
- 4) արոտավայրերի գերարածեցումը

55

**Ո՞ր պնդումն է ճիշտ**

- 1) Եվրոպայում այլևս վիճելի տարածքներ գոյություն չունեն:
- 2) Գլոբալացումը երկրների և ժողովուրդների ազատ ինքնորոշման և սեփական ինքնության հաստատման երևույթն է:
- 3) Տարածքային հակամարտություններն, ըստ իրենց բնույթի, լինում են միջպետական և ներպետական:
- 4) Տարածքային վեճերը երբեք խաղաղ ճանապարհով չեն լուծվում:

56

**Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները:**

- |                 |              |
|-----------------|--------------|
| 1) Պուերտո-Ռիկո | 5) Հաիթի     |
| 2) Կուբա        | 6) Վանկուվեր |
| 3) Սարդինիա     | 7) Ճամայկա   |
| 4) Գրենլանդիա   | 8) Վիկտորիա  |

57

**Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.**

- |            |           |
|------------|-----------|
| 1) Բեյրութ | 5) Կիև    |
| 2) Բեյջին  | 6) Անկարա |
| 3) Մինսկ   | 7) Բոգոտա |
| 4) Թեհրան  | 8) Կահիրե |

58

**Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերխոշոր են.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Թուրքիա  | 5) Գերմանիա |
| 2) Կանադա   | 6) Ուկրաինա |
| 3) Ճապոնիա  | 7) Նիգերիա  |
| 4) Բրազիլիա | 8) Պակիստան |

59

**Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

- |              |                 |
|--------------|-----------------|
| 1) Իսպանիա   | 5) Լատվիա       |
| 2) Ֆինլանդիա | 6) Դանիա        |
| 3) Ճապոնիա   | 7) Մեծ Բրիտանիա |
| 4) Շվեդիա    | 8) Եգիպտոս      |

60

**Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Եմեն     | 5) Թուրքիա |
| 2) ԱՄՆ      | 6) Իրան    |
| 3) Կանադա   | 7) Լատվիա  |
| 4) Ուկրաինա | 8) Սիրիա   |

61 Գրել բազմամետաղային հանքավայրերի համարները.

- |               |              |
|---------------|--------------|
| 1) Հրազդանի   | 5) Սոթքի     |
| 2) Աբովյանի   | 6) Ախթալայի  |
| 3) Թեժ լեռան  | 7) Սվարանցի  |
| 4) Շահումյանի | 8) Մեղրաձորի |

62 Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով:

- 1) Վանա                      2) Սևանա                      3) Ուրմիա

63 ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել ըստ արևոտ օրերի թվի աճման կարգով.

- 1) Իջևան                      2) Գյումրի                      3) Մարտունի

(64-65) Քաղաքի բնակչության թիվը 40 000 է, բնակչության բացարձակ մեխանիկական աճը՝ 800 մարդ: Ծնվածների թիվը 3000 մարդ է, մահացածների թիվը՝ 1500 մարդ:

64 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո:

66 Օդի բացարձակ խոնավությունը  $10\text{գ/մ}^3$  է, հարաբերական խոնավությունը՝ 40%: Որոշել հազեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների քանակը:

67

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել սվյալ վայրի ժամային գոտին:

68

Որքա՞ն մակերես կզբաղեցնի Չինաստանը (9,6 մլն կմ<sup>2</sup>) 1 : 40 000 000 մասշտաբի քարտեզում:

69

Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի գոգավորություններում:
- 2) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
- 3) Կլիմայի ձևավորման ամենամեծ ազդեցություն ունի Խաղաղ օվկիանոսը:
- 4) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
- 5) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 6) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:

70

ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղը գորգագործությունն է:
- 2) Հարավից դեպի հյուսիս շարժվելիս մակերևույթը աստիճանաբար բարձրանում է:
- 3) Գետերը պատկանում են առավելապես Արաքսի ավազանին:
- 4) ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին:
- 5) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 6) Կլիման առավելապես չորային և խիտ ցամաքային է: